

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

### ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2019թ. դեկտեմբերի 27-ի նիստի

Խորհրդի 41 անդամներից ներկա էին 30-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Ս.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

#### Օրակարգ

1. Գիտական հաղորդում «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ (զեկ.՝ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոց. Արսեն Թավադյան և ասիստենտ Արսեն Հովհաննիսյան):

2. 2020-2021 ուսումնական տարվա մագիստրոսական ծրագրերի մասին (զեկ.՝ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոց. Տ.Դավթյան):

3. Հաղորդում ընթացիկ քննությունների արդյունքների և 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատաստության մասին:

4. ՈՒԳԸ նախագահի հաղորդումը՝ 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ծավալած գործունեության և առկա ծրագրերի մասին:

5. Ընթացիկ հարցեր:

1. **ԼՍԵՑԻՆ.** Գիտական հաղորդում «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ (զեկ.՝ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոց. Արսեն Թավադյան և ասիստենտ Արսեն Հովհաննիսյան):

Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոց. Արսեն Թավադյանը և ասիստենտ Արսեն Հովհաննիսյանը հանդես եկան «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ գիտական հաղորդմամբ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Հ.Խաչիկյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաղորդումն ընդունելի գիտություն (հաղորդումը կցվում է):

2. **ԼՍԵՑԻՆ.** 2020-2021 ուսումնական տարվա մագիստրոսական ծրագրերի մասին (զեկ.՝ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոց. Տ.Դավթյան):

Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոց. Տ.Դավթյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց 2020-2021 ուսումնական տարվա մագիստրոսական ծրագրերի բովանդակության, առկա մագիստրոսական ծրագրերը վերանայելու անհրաժեշտության և այս ուղղությամբ իրականացվող աշխատանքների ընթացքի մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

Հաղորդումն ընդունելի գիտություն:

**3. ԼՍԵՑԻՆ. Հաղորդում ընթացիկ քննությունների արդյունքների և 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատաստության մասին:**

Դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց ընթացիկ քննությունների արդյունքների և 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատաստության մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը, դոց. Ա.Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

Հաղորդումն ընդունելի գիտություն:

**4. ԼՍԵՑԻՆ. ՈՒԳԸ նախագահի հաղորդումը՝ 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ծավալած գործունեության և առկա ծրագրերի մասին:**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաղորդումն ընդունելի գիտություն (հաղորդումը կցվում է):

**5. Ընթացիկ հարցեր**

**5.1 ԼՍԵՑԻՆ.** Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի չորրորդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ Նազելի Թովմասյանի ատենախոսության թեմայի փոփոխման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Վ.Ստեփանյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ փոփոխել Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի չորրորդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ Նազելի Թովմասյանի ատենախոսության թեման և հաստատել այն <<Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնը որպես ներդրողների և պետությունների միջև վեճերի լուծման կառուցակարգ>> վերտառությամբ,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**5.2 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ Սոնա Մարգարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերտառությունը և գիտական ղեկավարին հաստատելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Վ.Հովհաննիսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ Սոնա Մարգարյանի՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը որպես քաղաքացիական դատավարության տարբերակված ձև» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04– «Դատական իրավունք».

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Վ.Հովհաննիսյանին.

**Գ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**5.3 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ Սարգիս Իսոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերտառությունը և գիտական ղեկավարին հաստատելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Վ.Հովհաննիսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ Սարգիս Իսոյանի՝ «Հատուկ գիտելիքների կիրառումը քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04– «Դատական իրավունք».

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոցենտ Ս.Մեղրյանին.

**Գ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

***Խորհրդի նախագահ***

***Գ.Ղազինյան***

***Խորհրդի քարտուղար***

***Տ.Սուջյան***

**ԿԱՐԾԻՔ**  
**ՔԱՐԾՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆԵ ՕՐԵՆՔԻ**  
**ՆԱԽԱԳԾԻ<sup>1</sup> ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. Բարձրագույն կրթության և գիտության ոլորտի զարգացումը մեծապես պայմանավորված է ժամանակին համընթաց կատարվող շարունակական համակարգային բարեփոխումներով և դրանց հաջող իրականացմամբ:

Հայաստանում իսկապես հասունացել է ընդհանրապես կրթության, այդ թվում՝ բարձրագույն կրթության, ինչպես նաև գիտության բարեփոխման պահը: Այս ոլորտներում կուտակվել են բազմաթիվ խնդիրներ, որոնք ակնհայտորեն բերում են արդյունավետության նվազման: Նախորդ տարիներին տեղի ունեցած մասնավոր փոփոխությունները հիմնականում արդյունք չեն տվել, քանի որ հաճախ կատարվել են անհամակարգային և առանց առկա կարողությունների հաշվառման:

«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագիծն այս տեսակետից արդիական է և անհրաժեշտ:

Նախագիծը նպատակ ունի համալիր կարգավորել բարձրագույն կրթության և գիտության ոլորտը, ինչի մասին է վկայում ինչպես նախագծի վերտառությունը, այնպես էլ դրանում տեղ գտած կարգավորումները:

Նախագիծը թիրախավորել է բարձրագույն կրթության և գիտության ոլորտի բոլոր ասպեկտները՝ հանդիսանալով կարևոր հիմնակետ բարեփոխումների իրականացման ճանապարհին:

Նախագծով, մասնավորապես, հստակեցվում են տարբեր եզրույթներ և ձևակերպումներ, որոնք տարակերպ են ընկալվում և առաջացնում են գործնական խնդիրներ, բարելավվում է բուհ ընդունելության ընթացակարգը, էապես խթանվում է ուսանողների շարժունակությունը, համատեղ կրթական ծրագրեր իրականացնելու համար ստեղծվում են իրավական հիմքեր, փորձ է արվել հստակություն մտցնել Կառավարության և լիազոր մարմնի լիազորությունների տարանջատման տեսանկյունից, բուհերի կառավարման համակարգը ենթարկվել է էական փոփոխությունների՝ կառավարման խորհուրդ-ակադեմիական խորհուրդ-ռեկտոր կառավարման մարմինների փոխադարձ կապի և գործառույթների տարանջատման համատեքստում:

2. Միաժամանակ, Նախագծի մանրակրկիտ ուսումնասիրությունը թույլ է տալիս նկատել որոշ համակարգային խնդիրներ, որոնք էապես կարող են խոչընդոտել Նախագծի հիմնավորմամբ հետապնդվող նպատակի իրացմանը:

---

<sup>1</sup> Այսուհետ նաև՝ Նախագիծ:

Սույն կարծիքը նկարագրելու է Նախագծի համակարգային խնդիրները: Այստեղ անդրադարձ չի կատարվում Նախագծի ամեն դրույթին առանձին, քանի որ դա կշեղի ուշադրությունը դրա հիմնական թերությունից՝ հիմնավորվածության և համակարգային մոտեցման բացակայությունից:

Նախագծի համակարգային խնդիրները մեծապես պայմանավորված են հայեցակարգային մոտեցումների բացակայությամբ, ինչի արդյունքում նախագծում էական նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ առկա են հատվածական կարգավորումներ: Մասնավորապես, գիտական մեկ աստիճանի անցման, գիտական կազմակերպությունների կարգավիճակի, բուհերի կառավարման համակարգի վերաբերյալ կարգավորումները թերի են, իսկ որոշ դեպքերում կարող են հանգեցնել գործնականում կառավարման անհնարինության:

Ցանկացած ոլորտի բարեփոխման համար կիրառվում են տարբեր գործիքներ, որոնց շարքին են դասվում՝ իրավական, տնտեսական, ֆինանսական, սոցիալական, քաղաքական գործիքները:

Օրենքը հանդիսանում է բարեփոխման իրավական գործիք, բայց ոչ միակը, այլ բազմաթիվ գործիքներից մեկը, որն, այլ գործիքների հետ սիներգետիկ կապի մեջ գտնվելով, ապահովում է ոլորտի կենսագործության և զարգացման իրավական հիմքերը:

Բարձրագույն կրթության և գիտության ոլորտի զարգացումն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ պետության պոզիտիվ պարտավորությունն է, ինչը ենթադրում է պետության կողմից ակտիվ գործողությունների իրականացում, կարգավորման այնպիսի գործիքակազմի սահմանում, որը կապահովի բարձրագույն կրթության և գիտության զարգացման անընդհատականությունը:

Կրթության և գիտության ոլորտը, լինելով բազմաշերտ և բազմաբովանդակ, պահանջում է համալիր մոտեցում՝ ինչպես առկա խնդիրների վերհանման, այնպես էլ դրանց լուծման ճանապարհին:

Բարեփոխումների համալիրությունն ամբողջացնող և դրա իրագործման ժամանակային ու գործողությունների քարտեզը՝ հայեցակարգն է, ռազմավարությունը կամ այլ ռազմավարական փաստաթուղթ, որը գույքագրում է խնդիրները, առաջադրում լուծումներ և տալիս է դրանց հիմնավորումները:

Դեռևս Նախագծի աշխատանքային տարբերակի վերաբերյալ քննարկումների ընթացքում հատկապես շեշտադրվել է հայեցակազմի բացակայությունը՝ որպես ամենաէական և մնացած թերությունները «ծնող» խնդիր:

Հայեցակարգի բացակայությունը էապես ազդել է Նախագծի որակի և համակարգվածության վրա, ինչի արդյունքում տարբեր ինստիտուտների միջև օրգանական կապերը բացակայում են կամ բացահայտված չեն:

Նախագիծը, լինելով բավականին ծավալուն և կարգավորելով հասարակական հարաբերությունների շատ լայն շրջանական, ենթադրում է ոչ պակաս ծավալով և բովանդակությամբ հիմնավորումների առկայություն:

Որպես այս ոլորտում բարեփոխումների անհամակարգվածության օրինակ կարելի է բերել հետևյալը՝ Նախագծի աշխատանքային տարբերակի համեմատ կատարվել են որոշակի փոփոխություններ, սակայն թե Նախագծի աշխատանքային տարբերակում և թե Նախագծի՝ պաշտոնապես շրջանառված տարբերակում ընտրված մոդելների հիմնավորումները բացակայում են: Մասնավորապես, Նախագծի աշխատանքային տարբերակում ընտրվել էր բուհերի ակադեմիական խորհուրդների ձևավորման և կառավարման մեկ մոդել, իսկ Նախագծում՝ դրան հակադիր տրամաբանությամբ մոդել, աշխատանքային տարբերակում դեկանի պաշտոնը նշանակովի էր, իսկ պաշտոնապես շրջանառված տարբերակում՝ ընտրովի: Երկու պարագայում էլ որևէ հիմնավորում, մոդելների արդյունավետության նկարագրություն բերված չէ:

Նախագծի հիմնավորումն, ըստ էության, չի պարունակում որևէ փաստ, վիճակագրություն, հաշվարկ կամ վերլուծություն, որից կարելի կլիներ կատարել եզրահանգումներ նախագծի օգտակարության և դրանով լուծվող խնդիրների կարևորության մասին:

Նախագծով առաջադրվում է մոդելների փոփոխություն՝ անցումը մեկ գիտական աստիճանի, հանրային և մասնավոր բուհերի կառավարման գործող համակարգի տրամաբանության փոփոխություններ, գիտական կազմակերպությունների կարգավիճակի փոփոխություններ և այլն: Սակայն, Նախագծի հիմնավորումներում չկան առկա մոդելի թերությունների մասին վկայող փաստական տվյալներ կամ նոր մոդելի անցման արդյունքում ակնկալվող դրական փոփոխությունների վերաբերյալ գոնե մոտավոր կանխատեսումներ, այդ թվում՝ վիճակագրության տեսքով:

Արդյունքում, ներկայացված փոփոխությունները կրում են «տակտիկական» բնույթ և պատասխան չեն տալիս այս ոլորտում առկա համակարգային խնդիրներին:

Կրթության և գիտության ոլորտում բարեփոխումներ իրականացնելուց առաջ պետք է հստակ հասկանալ առկա խնդիրները և այդ խնդիրները ծնող պատճառները: Այս պահին պետությունը չունի գիտական և կրթական արդյունքի գնահատման մեխանիզմ, ինչպես նաև առկա կարողությունների հաշվարկ:

Նախագիծը մշակելիս չի կատարվել որևէ տնտեսական, սոցիալական, վիճակագրական ուսումնասիրություն:

Տնտեսական տեսակետից նախ անհրաժեշտ էր սահմանել հստակ նպատակներ, հասկանալ ներկայումս ծախսվող գումարներն բավարար են արդյոք այդ նպատակների իրականացման համար, գնահատել գիտության և կրթության կառավարվող մոդելներից որն է ամենաարդյունավետը և քիչ ծախսատարը:

Վիճակագրական տեսակետից պետք էր ուսումնասիրել այս պահին առկա և մոտակա տարիներին հնարավոր բուհ ընդունվողների թիվը, դիտարկել աշխատաշուկայի պահանջարկը, գնահատել բուհական/գիտական ոլորտի և այլ ոլորտներում առկա աշխատավարձերի տարբերությունը, դասախոսների/գիտաշխատողների անհրաժեշտ քանակը և առկա թվաքանակի հնարավոր փոփոխությունը, կատարել այլ անհրաժեշտ հաշվարկներ և դրա հիման վրա գտնել օպտիմալ լուծումը:

Սոցիալական տեսակետից անհրաժեշտ էր գնահատել այս պահին աշխատող գիտնականների, դասախոսների, սովորող ուսանողներին, դիմորդներին կարողությունները, նրանց ունակությունները և հնարավորությունները որոշակի փոփոխություններին ադապտացվելու տեսակետից:

3. Նախագծով ներկայացվում է հանրային բուհի կառավարման որոշակի մոդել: Այդ կառավարման մոդելը արժանի է ուշադրության այն համատեքստում, որ նախատեսում է լիովին նոր կարգավորումներ կառավարման մարմինների ձևավորման, լիազորությունների և գործառնման նոր կանոններ: Միաժամանակ, կառավարման մոդելը նախագծով առաջարկվող տեսքով մտահոգիչ է, քանի որ տանում է ոչ թե ակադեմիական ազատություններից բխող ինքնավարության ու ինքնակառավարման, այլ գործադիր բյուրոկրատական կառավարման մարմիններից կախվածության ու կենտրոնացման, ինչը հղի է լրջագույն վտանգներով: Առաջարկվող մոդելը ուղղահայաց կառավարման համակարգ է, որը, փաստացի, հնարավորություն է տալիս լիազոր մարմնին անհամաչափ վերահսկողություն սահմանել բուհերի նկատմամբ:

Այսպես, Նախագծով առաջարկվում է հանրային բուհի կառավարման խորհրդի այնպիսի կազմ, որում առնվազն 6-ը, այսինքն՝ ուղիղ կեսը պետք է լինեն համապատասխան նախարարի ներկայացուցիչներ: Սա համահունչ չէ միջազգային փորձին, մասնավորապես պետական բուհերում երբեք կառավարության ներկայացուցիչները չեն կազմում խորհրդի կեսը, պարզապես ապահովվում է որոշակի խելամիտ ներգրավվածություն՝ կառավարության քաղաքականությունը ներկայացնելու և վերահսկողություն ապահովելու նկատառումով: Առավել ևս բացառվում է, որ այդ անդամներից որևէ մեկը լինի խորհրդի նախագահ:

Որոշ բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման նախորդ փուլում միջազգային փորձագետները կարծիք էին հայտնել, որ ՀՀ բուհերի կառավարման մարմիններում գերակշռում է վարչական մասնակցությունը: Նախագծով ավելի շատ է սրվում այս խնդիրը, քանի որ լիազոր մարմինը նշանակում է ոչ միայն կառավարման խորհրդի կեսը, այլև կարող է ցանկացած ժամանակ դադարեցնել իր կողմից նշանակված անդամների լիազորությունները՝ այսպիսով լրիվ կախվածության մեջ դնելով իրենից:

Նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային բուհի կառավարման խորհուրդը գործում է 5 տարի ժամկետով, որի կազմը հաստատում է համապատասխան լիազոր մարմինը:

Միաժամանակ, նախագիծը չի կարգավորում այն հարցը, թե արդյոք լիազոր մարմինը կարող է չհաստատել բուհի կառավարման խորհրդի կազմը, թե հաստատելը նրա պարտականությունն է: Այդ առումով նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է բավականին անորոշ ձևակերպում, մասնավորապես, նշվում է, որ կառավարման խորհրդի կազմը հաստատում է համապատասխան լիազոր մարմինը՝ կառավարման խորհրդի ձևավորման պահանջների բավարարման դեպքում: Նշված կարգավորումը նախատեսում է պետական միջամտություն բուհի ինքնավարության մաս կազմող ինքնակառավարման գործառույթի իրացմանը:

Հարց է առաջանում, թե ինչու՞ և ինչպե՞ս պետք է լիազոր մարմինը ստուգի ձևավորման օրինականությունը, որը, փաստացի, ex ante վերահսկողություն է և խաթարում է բուհական ինքնավարության ինքնակառավարման բաղադրատարրը: Բացի այդ, անհասկանալի է, թե ինչ է լինում այն դեպքում, եթե լիազոր մարմինը գտնում է, որ կազմը չի ձևավորվել պատշաճ կարգով, ի՞նչ պետք է անի լիազոր մարմինը և ի՞նչ պետք է անի բուհը: Լուծված չէ նաև այն հարցը, թե ո՞վ պետք է խորհրդի կազմը ներկայացնի լիազոր մարմնի հաստատմանը և ի՞նչ ժամկետում պետք է կազմը հաստատվի:

Սահմանադրության 6-րդ հոդվածը սահմանում է, որ լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:

Բացի այդ, էականորեն նվազեցվել է կառավարման խորհրդի անդամների թիվը՝ ընդամենը տասներկու հոգի: Ընդ որում, խորհրդի անդամների կեսին նշանակում է լիազոր մարմինը, ինչը ևս ուղղակի միջամտություն է բուհական ինքնավարությանը: Մասնավորապես, նախագիծը չի կարգավորում խորհրդում որոշումների ընդունման կարգը, ինչը ենթադրում է, որ դա թողնված է բուհի կանոնադրությանը, որի արդյունքում, եթե բուհի կանոնադրությամբ չնախատեսվեն որոշումների ընդունման այնպիսի մեխանիզմներ, որոնք կբացառեն անդամների կեսի քվեարկելու դեպքում որոշումների ընդունումը, ապա ստացվում է, որ լիազոր մարմինը էականորեն ազդելու է որոշումների ընդունման գործընթացի վրա:

Նախագծի համաձայն՝ Կառավարման խորհրդի կողմից օրենքով և բուհի կանոնադրությամբ սահմանված կարգով երկու անգամ անընդմեջ ռեկտոր



չընտրելու դեպքում՝ կառավարման խորհրդի լիազորությունները դադարում են: Նախագիծը չի կարգավորում այն հարցը, թե այդ դեպքում ինչպե՞ս է ձևավորվելու նոր խորհուրդը, ի՞նչ ժամկետներում, ո՞վ է կատարելու ռեկտորի պարտականությունները, ինչի արդյունքում կարող ստեղծվել իրավիճակ, երբ տևական ժամանակ բուիը չի ունենա կառավարման մարմիններ:

Կառավարման անհամակարգվածությունը ակնհայտորեն նկատվում է նաև կառավարման խորհրդի և ակադեմիական խորհրդի լիազորությունների և փոխհարաբերությունների համատեքստում:

Մասնավորապես, ըստ նախագծի, ակադեմիական խորհուրդը կարող է առաջարկություններ ներկայացնել կառավարման խորհրդին բուիի կառուցվածքային փոփոխությունների վերաբերյալ, սակայն այդ առաջարկությունները պարտադիր բնույթ չեն կրում:

Բուիի կառուցվածքը հաստատում է կառավարման խորհուրդը, իսկ դրանց կանոնադրությունները և բուիի կրթական ծրագրերը ակադեմիական խորհուրդը:

Ստացվում է, որ ակադեմիական խորհուրդը չունի ակադեմիական կառուցվածքային միավորների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման հարցում որոշիչ ազդեցություն, այն դեպքում, երբ ակադեմիական խորհուրդն է հաստատում բուիի կրթական ծրագրերը:

Արդյունքում, կառավարման խորհուրդը, ձևավորվելով լիազոր մարմնի կողմից և լինելով նրանից մեծ կախվածության մեջ, կարող է առանց ակադեմիական խորհրդի կարծիքը հաշվի առնելու իրականացնելու բուիի կառուցվածքային փոփոխություններ, հաստիքների կրճատումներ: Այս կարգավորումը, նախ, բուիը վարչական կախվածության մեջ է դնում լիազոր մարմնից, երկրորդ, արդյունավետ չէ, քանի որ կառավարման խորհուրդը, ի տարբերություն ակադեմիական խորհրդի, չի կարող ինքնուրույն արդյունավետ լուծումներ տալ կարևոր հարցերին:

Բացի այդ, Օրինագծի 31-րդ հոդվածով սահմանված ռեկտորին ներկայացվող պահանջները անորոշ են: Մասնավորապես, նախատեսվում է, որ ռեկտորը պետք է ունենա գիտական աստիճան, սակայն չի նշվում, թե կոնկրետ ինչ գիտական աստիճանի մասին է խոսքը: Ինչպես արդեն նշվել է նախագիծը չի կարգավորում գործող գիտական աստիճանների հետագա ճակատագիրը, ինչի արդյունքում հարց է առաջանում, թե արդյոք ներկա գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձինք կարող են հավակնել ռեկտորի պաշտոնին, թե խոսքը նոր դոկտորի որակավորում ունեցող անձանց մասին է:

Եթե գործող գիտական կոչումները ունեցող անձինք կարող են հավակնել այդ պաշտոնին, ապա գոնե պետք է սահմանափակում դնել առ այն, որ միայն դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը կարող է հավակնել ռեկտորի պաշտոնին: Իհարկե, կարող են լինել դեպքեր, երբ թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձինք ավելի լավ կարողանան իրականացնել կառավարման գործառույթներ, սակայն դրանք բացառություններ են, այլ ոչ թե՝ օրինաչափություն: Բացի այդ,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռեկտորը պետք է ապահովի նաև բուհի երկարաժամկետ զարգամաց ռազմավարության իրացումը, որի անքակտելի բաղադրիչ է նաև գիտական գործունեությունը, ապա առավելևս ինչքան բարձր է ռեկտորի գիտական աստիճանը, այնքան հարուստ է նրա գիտական ուղին, որի արդյունքուն գիտահետազոտական բաղադրիչի իրացումն ավելի արդյունավետ կարող է լինել: Մանավանդ, պետք է հաշվի առնել, որ ռեկտորը լինելու է ակադեմիական խորհրդի նախագահը:

4. Նախագծով վերացվում է գիտական աստիճանաշնորհման երկաստիճան համակարգը և ներդրվում է միայն դոկտորի գիտական աստիճանը, ընդ որում՝ որպես բարձրագույն կթության երրորդ մակարդակ:

Աշխարհի բազմաթիվ երկրներում գործում է այդ մոդելը, որի հետ միաժամանակ գործում են «օժանդակող» կառուցակարգեր, որպեսզի գիտության զարգացումը չխաթարվի: Օրենքի նախագծում մեկ գիտական աստիճանի անցնելու արդյունքում այդ «օժանդակող» կառուցակարգերի ստեղծման նախադրյալները բացակայում են, ինչի արդյունքում առկա են գիտական մեկ աստիճանի անցման արդյունքում գիտության բնականոն զարգացման տեմպերի հնարավոր նվազման վտանգներ:

Նախագծի անցումային դրույթները սահմանում են միայն, որ մեկ գիտական աստիճանը փաստացի ներդրվելու է 2022 թվականի սեպտեմբերի մեկից: Այլ անցումային կարգավորումներ այդ մասով նախատեսված չեն, ինչի արդյունքում առաջանում են մի շարք հարցեր:

Ներկայումս կան իրավական ակտեր, որոնք դոկտորի գիտական աստիճան ունեցող անձանց համար նախատեսում են տարբեր պաշտոններում նշանակվելու ընթացակարգային երաշխիքներ (օրինակ՝ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը): Փոփոխության արդյունքում պահպանվելու՞ են այդ երաշխիքները և եթե այո, ապա արդյո՞ք դրանք պետք է տարածվեն նաև նոր կարգավորումներով դոկտոր համարվող անձանց վրա:

Թեկնածուի և նախագծով առաջարկվող դոկտորի գիտական աստիճանների հավասարեցման մեթոդաբանությունը զուրկ է որևէ խելամիտ հիմնավորումից. արմատապես տարբեր չափորոշիչներով ուղեկցվող գիտական աստիճանները նույնացնելը սուկ արհեստական գործընթաց է և թելադրված է իբրև միջազգային համընդհանուր չափանիշներին համահունչ օրենսդրական կարգավորում նախաձեռնելու միանշանակ անհիմն տրամաբանությամբ, ակնհայտ անտեսվում են տևական ժամանակ մարդկանց անհամեմատ առավել լայն դիապազոնով կատարված հետազոտությունները: Արհեստական հավասարեցումը չի համարվում միջազգային չափանիշ, բացի այդ, ողջամիտ կլիներ հետևել այն միջազգային փորձին, ըստ որի՝ նախապատվությունը տրվել է, օրինակ, դոկտորական գիտական աստիճանի դասակարգմանը՝ «1-ին կարգի դոկտոր և 2-րդ կարգի դոկտոր»: Բոլոր դեպքերում, հավասարեցումն աղերսներ ունի նաև իրավահավասարության

սահմանադրական սկզբունքի տեսանկյունից, քանզի պետական անհիմն միջամտության արդյունքում միանգամայն տարբեր ներդրում ունեցած անձանց զուտ օրենսդրական ճանապարհով փորձ է արվում պարզունակ մեթոդաբանությամբ հավասարեցնել:

Բացի դրանից, մեկ գիտական աստիճանի անցնելու դեպքում խախտվում է բուհական/գիտական կոչումների/պաշտոնների համակարգը: Այս պահին առկա է չորս բուհական պաշտոն՝ դասախոս, ասիստենտ, դոցենտ, պրոֆեսոր: Դասախոսի համար անհրաժեշտ որակավորումը բարձրագույն կրթությունն է, ասիստենտի համար՝ թեկնածու լինելը, դոցենտի համար՝ թեկնածու և որոշակի գործունեություն ծավալած լինելը, պրոֆեսորի համար նախատեսված են ամենաբարձր չափանիշները դոկտորի և որոշակի գործունեություն ծավալած լինելու ձևով: Մեկ աստիճանի անցնելու դեպքում փաստացի նույն անձը կարող է հավակնել բոլոր չորս պաշտոնի, ինչը հակասում է որևէ պաշտոնավարման համակարգի կառուցման տրամաբանությանը:

Բազմաթիվ եվրոպական երկրներում բուհի լրիվ պրոֆեսորի պաշտոնին հավակնելու համար անձը պետք է ոչ միայն լինի PhD, այլև անցնի լրացուցիչ որակավորում (հաճախ կոչվում է «հաբիլիտացիա»): Ընդ որում՝ շատ երկրներում այդ լրացուցիչ որակավորում ստանալու համար անձը պետք է պաշտպանի հաբիլիտացիոն թեզիս, որը փաստացի համապատասխանում է մեր դոտկորական ատենախոսությանը, և պաշտպանելուց բացի հաստատվի պետական լիազոր մարմնի կողմից:

Օպտիմալ լուծումը տվյալ դեպքում կլիներ թեկնածուի գիտական աստիճանը PhD-ին հավասարեցնելը, իսկ դոկտորի գիտական աստիճանը՝ հաբիլիտացված PhD-ին: Այսպիսով Հայաստանի գիտական աստիճանաշնորհման համակարգը հասկանալի կլիներ ինչպես եվրոպական, այնպես էլ նախկին խորհրդային երկրների համար, բացի դրանից հստակ կապահովվեր կապը գիտական աստիճանների և կոչումների համակարգի միջև:

5. Նախագիծը սահմանում է բուհում վարչական և ակադեմիական պաշտոններ զբաղեցնելու համար տարիքային խիստ սահմանափակումներ:

Մասնավորապես, նախագծի 36-րդ հոդվածի 14-15-րդ մասերը սահմանում են, որ

«14.Տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձը բուհում ակադեմիական կազմի թափուր պաշտոնների տեղակալման համար անցկացվող մրցութային ընտրությանը չի մասնակցում: Այդ անձի հետ բուհի ղեկավարը՝ ամբիոնի առաջարկությամբ, կարող է կնքել ոչ լրիվ ծանրաբեռնվածությամբ աշխատանքային պայմանագիր 1 ուսումնական տարի ժամկետով՝ տարեկան երկարաձգման իրավունքով:

15. Բուհում (մասնաճյուղում) վարչական պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում վարչական կամ գիտական ստորաբաժանման (ամբիոն) ղեկավարի պաշտոնում նշանակված (ընտրված) անձի լիազորությունները դադարեցվում են ռեկտորի որոշմամբ, եթե լրացել է նրա տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը:»:

Ստացվում է, որ բուհում վարչական կամ ակադեմիական պաշտոն զբաղեցնող անձինք 65 տարին լրանալու դեպքում այլևս չեն կարող հավակնել զբաղեցնելու որևէ պաշտոն, իսկ առավելագույնը ինչի ակնկալիք կարող են ունենալ այդ անձինք մեկ տարի ժամկետով ոչ լրիվ ծանրաբեռնվածությամբ աշխատանքային պայմանագիրն է, այն էլ՝ ռեկտորի հայեցողությամբ:

Այս մոտեցումը արդարացի չի կարող համարվել: Կրթության և գիտության ոլորտի առանձնահատկություններից մեկն այն է, որ տարիքի հետ աճում է գիտական և կրթական փորձառության մակարդակը և 65 տարին այն տարիքը չէ, որ գիտնականն այլևս չկարողանա ղեկավարել գիտական/բուհական գործընթաց: Ավելին ենթադրվում է, որ անձը պրոֆեսորի կոչմանն արժանանալու համար պետք է երկար ժամանակ ծախսի և չի կարող օրինակ անձը 35 տարեկանում դառնալ պրոֆեսոր, իսկ պրոֆեսորին ներկայացվող պահանջները պետք է խստացվեն, քանի որ այն ակադեմիական ամենաբարձր պաշտոնն է, ապա առավել ևս այս կարգավարումը քննադատության չի դիմանում:

Նախագծի հիմնավորման մեջ բացակայում են այս կարևոր փոփոխության վերաբերյալ փաստարկները, չկան վիճակագրական տվյալներ և այդ կարգավորման իրագործման դեպքում սպասվելիք արդյունքի վերաբերյալ գոնե մոտավոր կանխատեսումներ:

Ավելին, ըստ նախագծի վարչական պաշտոն զբաղեցնող անձանց 65 տարին լրանալու դեպքում նրանք միանգամից ազատվում են զբաղեցրած պաշտոնից անկախ այն հանգամանքից, թե երբ են ընտրվել/ նշանակվել:

Այս մոտեցումը էապես խոչընդոտում է բուհի արդյունավետ կառավարմանը, քանի որ ստեղծում է բուհի/ֆակուլտետի երկարամյա ռազմավարական ծրագրերը չիրագործելու, դրանք հաճախակի փոփոխելու վտանգ, ինչի արդյունքում խաթարվում է կառավարման կայունությունը:

Սա խոսում է նաև երկակի ստանդարտների մասին, քանզի, օրինակ հանրային ծառայության այն ներկայացուցիչներին, որոնք պատասխանատու են քաղաքականություն մշակելու համար (իսկ կրթական համակարգում հիշյալ ղեկավարները հենց քաղաքականություն մշակելու համար են կոչված), չի սահմանվում որևէ տարիքային սահմանափակում, մինչդեռ՝ այդ

քաղաքականությունն իրագործելու համար պատասխանատու հանրային ծառայողների համար սահմանվում են որոշակի սահմանափակումներ:

Բացի դրանից, տարիքային սահմանափակումը հակասում է ՀՀ սահմանադրության 29-րդ հոդվածին և հանդիսանում է տարիքային խտրականություն: Այս կարգավորումը հակասում է նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքին, քանի որ այնտեղ նույնպես նախատեսված չէ գործատուի անվերապահ իրավունքը լուծելու աշխատանքային պայմանագիրը աշխատողի՝ թոշակային տարիքն անցնելու դեպքում:

Որևէ անձի հետ աշխատանքային պայմանագրի լուծումը, նրան պաշտոնից հեռացումն առանց վերջինիս փաստացի կատարած աշխատանքի գնահատման չի կարող դիտարկվել իրավաչափ:

6. Նախագծի վերտառությունը, ինչպես նաև նախագծի կարգավորման առարկան ցույց են տալիս, որ մեկ իրավական ակտի շրջանակներում փորձ է արվել միավորել բարձրագույն կրթության և գիտության ոլորտները: Ներկայումս բարձրագույն կրթության և գիտության ոլորտները ունեն փոխկապակցվածության բարձր մակարդակ, սակայն, միևնույն ժամանակ, առանձին զարգացող և ինքնուրույն գործառող ոլորտներ են, որի արդյունքում դրանց միավորումը մեկ օրենքում այս տեսքով, կարծում ենք, արդարացված չէ:

Նախագծի ընդունման անհրաժեշտության հիմնավորումումից հնարավոր չէ վերջնականորեն ընկալել նախագծի հեղինակների կողմից որդեգրված մոդելի հիմքում դրված տրամաբանությունը:

Նախագծի բովանդակության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոլորտների միավորումը կրում է արհեստական բնույթ, քանի որ նախագծի առավել մեծ մասը նվիրված է բարձրագույն կրթության հատվածին, իսկ գիտության մասով, ըստ էության, կարգավորումները բավականին քիչ են և թերի:

Մասնավորապես, նախագծի հիմնավորման մեջ շեշտադրվում է, որ գիտության ոլորտում հստակեցման կարիք ունեն նաև կառավարություն-պետական կառավարման լիազոր մարմին-գիտական կազմակերպություն իրավասության սահմանները, միջազգային չափանիշներին համապատասխան գիտական կադրերի պատրաստման մեխանիզմները, ինչպես նաև գիտության ոլորտում օտարերկրյա ներդրումների հետ կապված հարաբերությունները և կրթություն-գիտություն-տնտեսություն կապի խրախուսման մեխանիզմները, սակայն նախագիծը չի պարունակում այդ խնդիրները ամբողջական լուծումները:

Բացի այդ հիմնավորման մեջ նշվում է, որ անհրաժեշտ հիմքեր են դրվում գիտահետազոտական կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների համագործակցության և աստիճանական ինտեգրման համար՝ գիտական կազմակերպություններին ինքնուրույն գործելու, հետազոտական ցանցեր

և կոնսորցիումներ ձևավորելու կամ բուհերի կազմում որպես գիտահետազոտական ինստիտուտներ ընդգրկվելու իրավական հիմքեր ստեղծելով:

Իհարկե սա առաջին հայացքից լավ գաղափար է, սակայն պետք է նկատել, որ այդ իրավական հիմքերը, փաստացի ստեղծված չեն: Մասնավորապես, Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ բարձրագույն կրթության երրորդ մակարդակում ուսումնառությունը բուհն իրականացնում է ինքնուրույն կամ գիտական կազմակերպության հետ համատեղ, սակայն չի սահմանում, թե ինչպես է ապահովվելու այդ հագործակցությունը, մասնավորապես այն դեպքերում, եթե բուհը չցանկանա որևէ գիտական կազմակերպության հետ համատեղ իրականացնել ուսումնառությունը, բացակայում են նաև այն իրավական նախադրյալները, որոք բուհին «կստիպեն» ուսումնառությունը կազմակերպել գիտական կազմակերպության հետ համատեղ:

Անհասկանալի է, թե գիտության և կրթության սերտաճման որ մոդելն է ընտրվելու նախագծի ընդունման դեպքում: Ակնհայտ է, որ, օրինակ՝ ԳԱԱ կազմում գտնվող ինստիտուտները «անկախանալու» են, սակայն նշված չէ՝ դրա արդյունքում ինչպես են այդ ինստիտուտները համագործակցելու բուհերի հետ, արդյոք մտնելու են բուհական համակարգի մեջ:

Կարծում ենք, միայն տնտեսական և վիճակագրական ուսումնասիրությունների հիման վրա է կարելի հասկանալ՝ գիտության կառավարման որ մոդելն է ամենաարդյունավետը: Օրինակ՝ ակնհայտ է, որ եթե ԳԱԱ կազմում գտնվող ինստիտուտներին տրվում է ինքնավարություն, ապա ամեն մեկի համար գործառության ծախսերի թիվը ավելանալու է: Մյուս կողմից, համոզված ենք, որ ԳԱԱ գործունեությունն այլ ուղղությամբ բարելավելու, դրա լիազորությունները հստակեցնելու դեպքում հնարավոր է ինստիտուտների կառավարման արդյունավետությունը բարձրացնել, իսկ բուհերի հետ համագործակցությունն ավելի դյուրինացնել:

Ամեն դեպքում, այս պահին որևէ հաշվարկ և մեխանիզմ նախատեսված չէ, և, փաստացի, Նախագծի ընդունման դեպքում ամբողջ գործընթացը մնալու է լիազոր մարմնի լրիվ կառավարման ներքո:

7. Յուրաքանչյուր երկրում, գիտության զարգացման պատմականորեն ձևավորված ավանդույթների ուժով տարբեր անվանումներով և տարբեր կազմակերպատիրական ձևերով կազմավորվում են գիտական կառույցներ, որոնք ոչ միայն ինքնակառավարման մարմնի կարգավիճակով միավորում են բարձրակարգ գիտնականների, այլև հանդիսանում են դասական իմաստով գիտական ներուժի համակարգման հաստատություններ, այսինքն՝ այդպիսիք բնավ սոսկ խորհրդատվական կառույցներ չեն: Մինչդեռ՝ նախագիծը նախապատվությունը տվել է գիտական այդպիսի արդեն իսկ կայացած կառույցը պարզապես խորհրդատվական մարմնի կարգավիճակի իջեցնելու տարբերակին. Մասնավորապես, օրինագծի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Հայաստանի

Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան բարձրագույն գիտական կոչումներ ունեցող և Հայաստանի կամ օտարերկրյա ճանաչված գիտնականների ինքնակառավարվող միավորում է, որի հիմնական գործառույթը գիտության զարգացման և գիտահետազոտական գործունեության արդյունքների ներդրման, ինչպես նաև հանրապետության տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման ուղղությամբ համապատասխան ոլորտի պետական քաղաքականություն մշակող և իրականացնող մարմիններին խորհրդատվության տրամադրումն է»:

Ինչ խոսք, տարբեր գործոններով պայմանավորված, ներկայումս Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան բախվում է տարաբնույթ խնդիրների, սակայն դրանց լուծման միակ երաշխիքը հիմնավորված բարեփոխումներն են, հակառակ պարագայում, թերևս, այն մտայնությունն է իշխում, ըստ որի՝ «չկա կառույցը, չկա պրոբլեմը» հայտնի անհեռանկար ու ուժային մեթոդաբանությունն է կանխորոշում զարգացումները:

Մյուս կողմից, անտեսվում է այն, որ նշված կառույցը, այնուամենայնիվ հզոր ներուժ ունի, իրականացրել և իրականացնում է միջազգային ճանաչում ունեցող հետազոտություններ և այլն, իսկ դրանք կանխորոշում են պետության գիտական ճանաչվածության և գործնական հենքով կիրառական արժեհամակարգը, և շատ վտանգավոր է առանց տեսլականի և հստակ հաշվարկների դրան զուտ խորհրդատվական մարմնի կարգավիճակ տալը:

8. Որպես եզրակացություն կարելի է նշել, որ բարձրագույն կրթության և գիտության ոլորտի բարեփոխումները պետք է կատարվեն համակարգված, զգուշորեն և հստակ հաշվարկների հիման վրա: Այդ բարեփոխումները պետք է հիմնված լինեն նաև հանրակրթության համակարգի բարեփոխման վրա: Վերջիվերջո, որակյալ բարձրագույն կրթության և գիտության հիմնական գրավականներից մեկը որակյալ դիմորդներն են, որոնք պատրաստված են, ձգտում են ձեռք բերել գիտելիքներ և զարգացնել իրենց ընտրած ոլորտը:

Այս տեսակետից, Նախագծի հիման վրա արվող բարեփոխումները, ըստ էության, կտրված են փաստացի իրավիճակից, նորամուծությունները չեն լուծում ո՛չ բարձրագույն կրթության, ո՛չ գիտության ոլորտի ռազմավարական հիմնահարցերը, այլ ընդամենը լուծում են որոշակի տեխնիկական հարցեր՝ միաժամանակ առանց հիմնավորման փոփոխելով որոշակի կարգավորումներ, ինչի պատճառով առկա է վտանգ, որ բարեփոխումները հիմնականում կբերեն բացասական արդյունքի:

Հայաստանում ցավոք սրտի բարեփոխումները շատ հաճախ կատարվել են արագացված ու առանց ռազմավարական հայեցակարգի, հաշվարկների և վիճակագրության: Արդյունքում բազմաթիվ ոլորտներում՝ սկսած գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտների սեփականաշնորհումից

մինչև ընդերքօգտագործում և ջրօգտագործում, առկա են շատ լուրջ, շատ բարդ լուծելի խնդիրներ: Կրթության ոլորտի բարեփոխումները նույնպես հաճախ կատարվել են նույն տրամաբանությամբ, ինչի արդյունքում դրական փոփոխությունների փոխարեն ունենք ավելի խնդրահարույց իրավիճակ: Խոսքը, մասնավորապես, ավագ դպրոցների, բակալավրիատի, մագիստրատուրայի հապճեպ ներդրման մասին է:

Այս տեսակետից, գտնում ենք, որ ոլորտի բարեփոխումներն իրականացնելուց առաջ պետք է նախ կուռ հաշվարկների և հետազոտությունների հիման վրա մշակել ռազմավարություն, որը ցույց կտա ոլորտի զարգացման ամենաարդյունավետ, քիչ ծախսատար և մեր պայմաններին համապատասխան մոդելը, քննարկել այդ մոդելը շահագրգիռ հանրության հետ և նոր դրա հիման վրա մշակել օրենքի նախագծեր:



## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Ուսանողական գիտական ընկերության

ք. Երևան

15. 12. 2019թ.

(2019-2020 ուսումնական տարի, 1-ին կիսամյակ)

h/h	Միջոցառման բնույթը	Խորագիրը/Թեման	Անցկացման օրը
1.	Սեմինար	«Միջազգային իրավունք» (բանախոս՝ ԱՄՆ Թաֆթս համալսարանի պրոֆեսոր Մայքլ Գլեննոն)	07.06.2019
2.	Հանդիպում	Տեղեկատվական հանդիպում arlis.am կայքի ներկայացուցիչների հետ	11.09.2019
3.	Սեմինար	Բուժաշխատողների աշխատանքային իրավունքները և քաղաքացիաիրավական պատասխանատվությունը (ԵՊՀ ՈՒԳԸ-ի հետ համագործակցությամբ)	27.09.2019
4.	Գիտաժողով	ԵՊՀ ՈՒԳԸ 6-րդ միջազգային գիտաժողով	30.09-04.10.2019
5.	Սեմինար	«Գործարար համբավի պաշտպանությունը» (բանախոս՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամ Գ. Բեքմեզյան)	15.10.2019
6.	Սեմինար	«Հանցակցության ինստիտուտի առանձնահատկությունները» (բանախոս՝ ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի վարիչ Ա. Գաբուզյան)	17.10.2019
7.	Սեմինար	«Հետազոտական աշխատանք կատարելու տեխնիկա» (բանախոս՝ Արդարադատության ակադեմիայի պրոռեկտոր Ա.Մանասյան)	17.10.2019

8.	Այց	Հայաստանի բնապահպանության թանգարան (ԵՊՀ էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի հետ համագործակցությամբ)	17.10.2019
9.	Սեմինար-քննարկում	«Մտավոր սեփականության իրավունքի խախտումները. մարտահրավերներ և արձագանք» (բանախոս՝ ԱՄՆ ֆեդերալ կառավարության իրավաբան Վ. Վարդանյան)	23.10.2019
10.	Սիմուլյացիոն խաղ	Եվրոպական պառլամենտի նիստ	14.11.2019
11.	Հանդիպում	Մրգաշատի դպրոցի 11-12-րդ դասարանի աշակերտների հետ, գիտական աշխատանք կատարելու տեխնիկայի ներկայացում (բանախոս՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ՈւԳԸ նախագահ Լ. Թադևոսյան)	15.11.2019
12.	Սեմինար-դասախոսություն, հանդիպում	«Խոսքի ազատություն» (բանախոս՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ՈւԳԸ անդամ Գ. Բարսեղյան, Երևանի Գ. Էմինի անվան դպրոց, ELSA Armenia-ի, ԵՊՀ իրավաբանական կլինիկայի հետ համագործակցությամբ)	19.11.2019
13.	Սեմինար-դասախոսություն, հանդիպում	«Խոսքի ազատություն» (բանախոս՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ՈւԳԸ անդամ Հ. Հովակիմյան, Երևանի Գ. Էմինի անվան դպրոց, ELSA Armenia-ի, ԵՊՀ իրավաբանական կլինիկայի հետ համագործակցությամբ)	20.11.2019

14.	Այց	Երևան քաղաքի դատարանի Էրեբունու նստավայր, «Առանց պատմուճանի» դասախոսություն դատավոր Ե. Եսոյանի հետ	21.11.2019
15.	Սեմինար- դասախոսություն, հանդիպում	«Խոսքի ազատություն» (բանախոս՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ Լ. Թադևոսյան, Երևանի Ջոն Կիրակոսյանի անվան դպրոց, ELSA Armenia-ի, ԵՊՀ իրավաբանական կլինիկայի հետ համագործակցությամբ)	21.11.2019
16.	Քննարկում, ֆիլմի դիտում	«Ամուսարի շահագործման իրավական հիմնախնդիրները», փաստավավերագրական ֆիլմի դիտում (ԵՊՀ էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի հետ համագործակցությամբ)	27.11.2019
17.	Սեմինար	«Խոսքի ազատության սահմանները» (բանախոս՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դասախոս, ի.գ.թ. դոցենտ Ա. Թավադյան, ELSA Armenia-ի հետ համագործակցությամբ)	27.11.2019
18.	Աշխատաժողով Օր 1	«Հայկյան իրավակարգ-2050» (ուսանողները ներկայացրին իրենց զեկույցները Հայաստանի սոցիալ- քաղաքական և պետաիրավական կառուցվածքների ձևավորման վերաբերյալ)	02.12.2019
19.	Քննարկում	«Ինչո՞ւ ընտրել փաստաբանություն» (բանախոս՝ ԵՊՀ իրավաբանական կլինիկա դասախոս-համակարգող, փաստաբան Հայկ Ալումյան)	04.12.2019

20.	Սեմինար	«Իրավունք և բարոյականություն» (բանախոս՝ Շվեդիայի Լինշոփինգի համալսարանի պրոֆեսոր Հերբերտ Յակոբսոն)	05.12.2019
21.	Սեմինար	«Մտածե՛ք քառակուսուց դուրս. հաջողության հասնելու ուղին » (բանախոս՝ Շվեդիայի Լինշոփինգի համալսարանի պրոֆեսոր Յաներիկ Լունդբլիստ)	05.12.2019
22.	Աշխատաժողով Օր 2	«Հայկյան իրավակարգ-2050» (ուսանողները ներկայացրին իրենց գեկույցները Հայաստանի սոցիալ- քաղաքական և պետաիրավական կառուցվածքների ձևավորման վերաբերյալ)	06.12.2019
23.	Այց, Քննարկում	ՀՀ Վճռաբեկ դատարան, «Առանց պատմուճանի» դասախոսություն դատարանի նախագահ Ե. Խունդկարյանի հետ	06.12.2019
24.	Քննարկում	«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ քննարկում (բանախոս՝ «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի փորձագետ Լ. Պետրոսյան)	06.12.2019
25.	Սեմինար, Ֆիլմի դիտում	«Օզոնային շերտ. իրավական հայեցակարգ», «Օզոնային շերտ» փաստավավերագրական ֆիլմի դիտում (բանախոս՝ ԵՊՀ էկոլոգիական ուսումնասիրությունների կենտրոնի ավագ գիտաշխատող, ի.գ.դ. պրոֆեսոր Ա. Իսկոյան)	11.12.2019

26.	Սեմինար	«Վերադարձ բնություն. իրավական հայեցակարգ» (բանախոս՝ ԵՊՀ Էկոլոգիական ուսումնասիրությունների կենտրոնի ավագ գիտաշխատող, ի.գ.դ. պրոֆեսոր Ա. Իսկոյան)	11.12.2019
27.	Դատախաղ	Վարչական դատավարության միջհոսքային դատախաղ-մրցույթ (դատավոր՝ Վարչական վերաքննիչ դատարանի դատավոր Կ. Ավետիսյան)	13.12.2019
28.	Դատախաղ	Պետության և իրավունքի տեսության վերաբերյալ դատախաղ-մրցույթ մագիստրատուրայի ուսանողների միջև	16.12.2019

### **Ձեռքբերումներ**

1. Գևորգ Բարսեղյան, Վահագն Թանգամյան - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և Միջազգային իրավական համագործակցության գերմանական (IRZ) հիմնադրամի կազմակերպած չորրորդ միջբուհական դատախաղ,
2. Արման Հակոբջանյան, Սեդա Վաղարշյան - GIZ Սահմանադրական իրավունքի աշնանային դպրոց,
3. Հարություն Եսոյան, Վիկտորյա Մարտիրոսյան – “Եվրոպայի իրավաբան ուսանողների հայկական ասոցիացիա” հկ-ի կողմից կազմակերպված հանրապետական դատախաղ, 2-րդ հորիզոնական,
4. Հարություն Եսոյան – Լավագույն բանախոս “Եվրոպայի իրավաբան ուսանողների հայկական ասոցիացիա” հկ-ի կողմից կազմակերպված հանրապետական դատախաղում
5. Լեյլի Թադևոսյան – ԵՊՀ բրոնզե մեդալ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի

ՈՒԳԸ նախագահ՝

Լ. Թադևոսյան

Ֆակուլտետային ՈՒԳԸ խորհրդատու՝

Տ. Սուջյան